ԵՊԵԿ
YTPC

Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ն, լինելով էներգետիկայի ոլորտի առանցքային ընկերություններից մեկը, իր ուրույն տեղն է գրավում Հայաստանի էներգետիկ համակարգում: Մեր բոլոր ջանքերը ուղղված են Ընկերության գործունեության հուսալիության և կայունության ապահովմանը, արտադրական և ֆինանսական ցուցանիշների բարելավմանը: Դրա վկայություններից մեկն էլ նախորդ տարի արձանագրված դրական զարգացումներն են, որոնք հիմքեր են ստեղծում հետագայում ավելի բարձր արդյունքների հասնելու համար:

Մենք ձեռնարկում ենք բոլոր ջանքերը այսուհետ ևս Ընկերության արդյունավետ և հուսալի կառավարումն իրականացնելու, ֆինանսական և տեխնիկական վիճակը բարելավելու, ծախսերը նվազագույնի հասցնելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կարևորելով ռազմավարական և ներդրումային ծրագրերը՝ Ընկերությունը պատրաստ է շարունակելու եւ հաջողությամբ ավարտին հասցնելու այն աշխատանքները, որոնք միտված են էներգաբլոկի տեխնիկական վերազինման, հուսալի և երկարաժամկետ շահագործման համար նպաստավոր պայմանների ապահովմանը:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ

01 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ 6

02 ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 13

2.1 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

*Հասույթ և ինքնարժեք*
*Գնովի էլեկտրաէներգիայի գծով ծախս*
*Աշխատավարձ*
*Նյութական ծախսեր*
*Մաշվածության գծով ծախս*
*Հարկեր և պարտադիր այլ վճարներ*
*Վարկերի տոկոսների մարում*
*Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր*

03 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 32

3.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

3.1 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ

3.2 ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

04 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — 40

05 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ — 42

5.1 ՀՇԳՑ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ GT13E2 MXL ՏԻՊԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

5.2 ՀՇԳՑ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ GT13E2 MXL ՏԻՊԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.3 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

*Ծրագրի նպատակը և հիմնական ուղղությունը*

*Ներդրումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորումները և սպասվող արդյունքների գնահատականը*

*Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները*

*Վարկի տոկոսադրույքը*

5.4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ ՓԲԸ-Ի ԿԱՏԱՐՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

06 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ — 50

# ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

01

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ կամ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 27.11.1997թ. թիվ 538 որոշման հիման վրա՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 09.12.1997թ. թիվ 192-ԳՄ հրամանով, որպես պետական փակ բաժնետիրական ընկերություն՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով (գրանցման վկայական 29.05.97թ. 01Ա-004948) և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

25.01.2000թ. պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանվել է փակ բաժնետիրական ընկերություն (գրանցման վկայական ներդիր՝ թիվ 005):

Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է և գործում է որպես Հայաստանի էներգետիկական համակարգի շուկայի մասնակից:

ՀՀ էներգետիկայի նախարարի 12-ը դեկտեմբերի 1998թ. N 329-ՄՄ հրամանով ստեղծվել է ընկերության «Ջերմային ցանցեր» մասնաճյուղ, որը գործում է ք.Երևան, Թեյշեբանի 8 հասցեում: Մասնաճյուղը պետական գրանցում է ստացել ՀՀ ձեռնարկությունների պետ. ռեգիստրի կողմից 05.10.2010թ.:

Ընկերության ընթացիկ կառավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը, տնօրենների խորհրդի իրավասության սահմաններում:

## «ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.

- ԻԻՀ-ի հետ երկու երկրների էներգահամակարգերի զուգահեռ աշխատանք, ինչը ապահովում է հայկական էներգահամակարգի անվտանգությունը և հուսալիությունը,
- ԻԻՀ-ի հետ իրականացվում է գազ-էլեկտրաէներգիա գործառույթը, ըստ որի ստացված 1 խմ բնական գազի դիմաց արտահանվում է 3 կՎտ×ժ էլեկտրական էներգիա: Նշված գործառույթի շրջանակներում ստացված բնական գազի մի մասը համապատասխան պայմանագրի հիման վրա հանձնում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Հրազդան 5 կայանին՝ 1խմ գազի դիմաց ստանալով 3.05 կՎտ×ժ էլեկտրական էներգիա և արտահանում է այն ԻԻՀ:
- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և Վրաստանի միջազգային էներգետիկ կորպորացիայի միջև կնքված պայմանագրի համաձայն հնարավոր է ԻԻՀ-ից ստացված բնական գազի որոշակի մասը արտահանել Վրաստան, յուրաքանչյուր 1 խմ գազի դիմաց ստացած 4.5 կՎտ×ժ էլեկտրաէներգիան արտահանել ԻԻՀ:

***«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն իրականացնում է իր գործունեությունը համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված հետևյալ լիցենզիաների՝***

- Լիցենզիա N 0015 ՀՀ-ում ջերմային էներգիայի փոխադրման գործունեություն,
- Լիցենզիա N 0016 ՀՀ-ում ջերմային էներգիայի բաշխման գործունեություն,
- Լիցենզիա N 0350 ՀՇԳՑ էներգաբլոկի համար էլ. և ջերմ. էներգիայի արտադրության,
- Լիցենզիա N 0318 բնական գազի ներկրման,
- Լիցենզիա N 0319 էլ. էներգիայի (հզորության) արտահանման:

Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որի կողմից կարգավորվում են նաև էլեկտրական էներգիայի արտադրության և մատուցած ծառայությունների սակագները:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի հին մասին պատկանում է 59,9 հեկտար մակերեսով հողատարածք, 81 771.47 մ2 ընդհանուր մակերեսով շենքեր, շինություններ:

Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի ընդհանուր տարածքը կազմում է 12,0 հեկտար մակերեսով հողատարածք, 9 764.6 մ2 ընդհանուր մակերեսով շենքեր, շինություններ, 106 մլրդ դրամ հիմնական միջոցներով:

Կայանի հին մասի բլոկային և ոչ բլոկային մասերի առաջին ագրեգատը գործարկվել է 1962 թվականին, վերջինը՝ 1965 թվականին: Կայանի հին մասի դրվածքային հզորությունը 610 ՄՎտ է և բաղկացած է երկու մասից՝ ոչ բլոկային – 290 ՄՎտ և բլոկային – 320 ՄՎտ հզորությամբ: Այնուհետև, նկատի ունենալով սարքավորումների հուսալիությունը և տեխնիկական ցուցանիշները, կայանի դրվածքային հզորությունը նախագծողի կողմից վերանայվել և հաստատվել է 550 ՄՎտ, այդ թվում ոչ բլոկային մասը՝ 250 ՄՎտ, իսկ բլոկային մասը՝ 300 ՄՎտ հզորությամբ:

Կայանի հին մասի ոչ բլոկային մասում տեղակայված են թվով չորս ՊՏ-50-130/13, մեկ Ր-50-130/13 տիպի ջերմաֆիկացիոն տուրբիններ՝ 250 ՄՎտ էլեկտրական և 2638 ԳՋոուլ/ժամ ջերմային ընդհանուր հզորությամբ և թվով հինգ ՏԳՄ-84 տիպի կաթսայական ագրեգատներ:

Կայանի հին մասի բլոկային մասում տեղակայված են թվով երկու Կ-150-130 տիպի կոնդենսացիոն տուրբիններ՝ 300 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և թվով երկու ՏԳՄ-94 տիպի կաթսայական ագրեգատներ:

2008թ. հունիսից Ընկերության հարակից տարածքում սկսվել է համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի կառուցումը, որն ավարտվել է 2010թ. ապրիլին և հանձնվել է շահագործման:

Համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը կառուցվել է համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորմամբ, կառուցված է ժամանակակից տեխնոլոգիայով և գործող էլեկտրակայանների համեմատ ունի էլեկտրական և ջերմային էներգիաների բացթողնման վրա վառելիքի տեսակարար ծախսերի ցածր մեծություն, բարձր օգտակար գործողության գործակից, միավոր արտադրանքի համար շրջապատող միջավայր արտանետումների ցածր ցուցանիշներ:

***Համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը ունի հետևյալ բնութագրերը.***

- էլեկտրականի դրվածքային ընդհանուր հզորությունը՝ 271,7 ՄՎտ,
- էլեկտրականի դրվածքային էլեկտրական հզորությունը՝ 242 ՄՎտ,
- էլեկտրականի ջերմային հզորությունը՝ 434,9 ԳՋ/ժ:
- ՀՇԳՑԷ-ում տեղակայված են.
- մեկ գազատուրբինային տեղակայանք GT 13 E2 տիպի՝ 179,9 ՄՎտ դրվածքային հզորությամբ,
- մեկ շոգետուրբինային տեղակայանք Fuji ընկերության՝ 63.3 ՄՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ և 434,9 ԳՋ/ժ ջերմային էներգիայի առաքմամբ,
- մեկ ջերմության վերականգնիչ շոգեկաթսա "Nooter Ericsen/SEC" ընկերության արտադրության:

Կայանի ջրամատակարարումն իրականացվում է «Արարատյան» ջրատարով՝ Երևան քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգից: «Արարատյան» խմելու որակի ջուրն օգտագործվում է քիմիապես աղազրկված ջուր ստանալու համար, որը ծախսվում է արդյունաբերությանը մատակարարվող շոգու և ներկայանային կորուստները լրացնելու համար: Այն մտնելով քիմիական արտադրամաս մշակվում և աղազրկվում է հակադարձ օսմոս և անիոնիտային ու կատիոնային ֆիլտրերում ու տրվում կաթսատուրբինային արտադրամասի գազազերծիչ: «Արարատյան» խմելու որակի ջուրը օգտագործվում է նաև ջեռուցման ջրային ցանցերը ենթասնելու նպատակով, որի համար այն փափկեցվում է քիմիական արտադրամասում:

Քիմիական արտադրամասի ֆիլտրերի նյութերի վերականգնման ժամանակ առաջացած, ինչպես նաև հովացման համակարգի արտափչումից առաջացած կեղտաջրերը մինչև հեռացվելը մշակվում են չեզոքացման բաքում, այնուհետև թափվում են Հրազդան գետ, իսկ խմելու ջրի համակարգում առաջացած կեղտաջրերը մշակումից հետո լցվում են քաղաքային կոյուղի:

Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկում որպես վառելիք օգտագործվում է բնական գազ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված սակագները հետևյալն են՝

***Առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը (առանց ԱԱՀ)***

| Կիրառման ամսաթիվ | դրամ/կՎտxժ |
|---|---|
| 01.08.2016թ | 17.767 |
| 01.02.2017թ | 15.459 |

***Հզորության տրամադրման սակագին (առանց ԱԱՀ)***

| Կիրառման ամսաթիվ | դրամ/կՎտ |
|---|---|
| 01.08.2016թ | 4707.83 |
| 01.02.2017թ | 5102.30 |

ՀՀ պետական մարմինների և էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի սպառողների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրականացնում է էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծություն և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը: Այն հանդիսանում է նաև սույն տարեկան հաշվետվության ներկայացման արժույթ՝ հազ. դրամ ճշտությամբ: Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը:

# ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Ընկերության միակ բաժնետերը հաշվետու ամսաթվին և նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն է:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2017թ. դրությամբ կազմել է 10,424,652 հազար դրամ (31.12.2016թ.-ին՝ 12,047,679): Այն բաղկացած է 2,273,147 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 4,586 դրամ (31.12.2016թ.-ին՝ 5,300 դրամ):

YKPP

# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

02

## 2.1 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| Հ/Հ | Ցուցանիշներ | | Չ/Մ | 2016թ | 2017թ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | փաստացի | Նախատեսված | փաստացի |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Արտադրանք | | հազ. կՎտxժ | 1,427,314 | 1,563,180 | 1,543,598 |
| 2 | Օգտակար առաքում | | հազ. կՎտxժ | 1,380,764 | 1,510,040 | 1,493,063 |
| 3 | Սեփական կարիքների ծախս (ներառյալ ուժային տրանսֆորմատորների կորուստը) | | հազ. կՎտxժ | 46,549 | 53,140 | 50,535 |
| | 3.1 | Նույնը տոկոսներով | տոկոս | 3,26 | 3,40 | 3,27 |
| 4 | Պատվիրված հզորություն | | հազ. կՎտ | 2,739 | 2,527 | 2,495 |
| 5 | Սեփական արտադրանքից ՀԷՑ-ին առաքվող էլեկտրաէներգիա | | հազ. կՎտxժ | 774,389 | 765,530 | 804,918 |
| 6 | ԻԻՀ-ից ներկրված բնական գազ | | հազ. խմ | 366,393 | 340,074 | 376,955 |
| 7 | ԻԻՀ արտահանված էլեկտրաէներգիա | | հազ. կՎտxժ | 1,175,664 | 1,026,060 | 1,224,336 |
| | 7.1 | ԻԻՀ արտահանում գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում | հազ. կՎտxժ | 1,068,896 | 1,026,060 | 1,224,336 |
| | 7.2 | ԻԻՀ արտահանում փոխհոսքի գործառույթի շրջանակներում | հազ. կՎտxժ | 106,768 | - | - |
| 8 | ԻԻՀ-ից ներկրված էլեկտրաէներգիան փոխհոսքերի գործարքի շրջանակներում | | հազ. կՎտxժ | 76,624 | - | 75,101 |
| 9 | Բնական գազի իրացում Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին | | հազ. խմ | 181,786 | 96,70 | 147,44 |
| 10 | Վրաստան արտահանված բնական գազ | | հազ. խմ | 19,202 | - | - |
| 11 | Վրաստանից ներմուծված էլեկտրաէներգիա | | հազ. կՎտxժ | 138,984 | - | - |
| 12 | Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած էլեկտրաէներգիա՝ (Հրազդան 5) | | հազ. կՎտxժ | 338,701 | 294,940 | 549,435 |
| 13 | Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած բնական գազ (գազ-գազ) | | հազ. խմ | 37,443 | - | 53,187 |
| 14 | Գազպրոմ Արմենիային իրացրած բնական գազ՝ (գազ-գազ) | | հազ. խմ | 13,633 | - | 53,187 |
| 15 | Գազպրոմ Արմենիայից գնված բնական գազ (Երևանի ԳԳՄ) | | հազ. խմ | 123,634 | 103,906 | 104,056 |

| Հ/Հ | Ցուցանիշներ | | Չ/Մ | տարբերություն /7=6-5/ | տարբերություն /8=6-4/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 7 | 8 |
| 1 | Արտադրանք | | հազ. կՎտժ | (19,582) | 116,284 |
| 2 | Օգտակար առաքում | | հազ. կՎտժ | (16,977) | 112,299 |
| 3 | Սեփական կարիքների ծախս (ներառյալ ուժային տրանսֆորմատոր ների կորուստը) | | հազ. կՎտժ | (2,605) | 3,986 |
| | 3.1 | Նույնը տոկոսներով | տոկոս | (0.13) | (0.01) |
| 4 | Պատվիրված հզորություն | | հազ. կՎտ | (32) | (245) |
| 5 | Սեփական արտադրանքից ՀԷՑ-ին առաքվող էլեկտրաէներգիա | | հազ. կՎտժ | 39,388 | 30,529 |
| 6 | ԻԻՀ-ից ներկրված բնական գազ | | հազ. խմ | 36,881 | 10,562 |
| 7 | ԻԻՀ արտահանված էլեկտրաէներգիա | | հազ. կՎտժ | 198,276 | 48,672 |
| | 7.1 | ԻԻՀ արտահանում գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում | հազ. կՎտժ | 198,276 | 155,440 |
| | 7.2 | ԻԻՀ արտահանում փոխհոսքի գործառույթի շրջանակներում | հազ. կՎտժ | - | (106,768) |
| 8 | ԻԻՀ-ից ներկրված էլեկտրաէներգիան փոխհոսքերի գործարքի շրջանակներում | | հազ. կՎտժ | 75,101 | (1,523) |
| 9 | Բնական գազի իրացում Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին | | հազ. խմ | 50,74 | (34,346) |
| 10 | Վրաստան արտահանված բնական գազ | | հազ. խմ | - | (19,202) |
| 11 | Վրաստանից ներմուծված էլեկտրաէներգիա | | հազ. կՎտժ | - | (138,984) |
| 12 | Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած էլեկտրաէներգիա՝ (Հրազդան 5) | | հազ. կՎտժ | 254,495 | 210,734 |
| 13 | Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած բնական գազ (գազ-գազ) | | հազ. խմ | 53,187 | 15,745 |
| 14 | Գազպրոմ Արմենիային իրացրած բնական գազ՝ (գազ-գազ) | | հազ. խմ | 53,187 | 39,555 |
| 15 | Գազպրոմ Արմենիայից գնված բնական գազ (Երևանի ԳԳՄ) | | հազ. խմ | 150 | (19,578) |

Ընկերության ՀՇԳՑ էներգաբլոկը 2017թ-ին փաստացի արտադրել է 1,543,598 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, ինչը 19,582 հազ. կՎտxժ-ով պակաս է 2017թ-ի համար նախատեսված 1,563,180 հազ. կՎտxժ արտադրանքի ծավալից և 116,284 հազ կՎտxժ-ով ավել 2016թ-ին փաստացի արտադրած 1,427,314 հազ կՎտxժ էլեկտրաէներգիայի ծավալից:

2017թ-ին Ընկերության սեփական կարիքների համար օգտագործել է 50,535 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա /կամ լրիվ արտադրանքի շուրջ 3,27 տոկոսը/, ինչը պակաս է պլանավորածից 2,605 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայով և 3,986 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայով ավել է 2016թ-ի փաստացի ծախսվածից:

Արտադրանքի և սեփական կարիքների համար ծախսված էլեկտրաէներգիայի տարբերությունը կազմում է Ընկերության օգտակար առաքումը:

2017թ-ին այն կազմել է 1,493,062 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, որը 16,977 հազ. ԿՎտxժ-ով պակաս է եղել 2017թ-ի համար նախատեսված օգտակար առաքումից և 112,299 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայով ավել է 2016թ-ի փաստացի օգտակար առաքումից:

Փաստացի պատվիրված հզորությունը 2017թ-ին կազմել է 2,495 հազ Կվտ, այն 2017թ-ի նախատեսված հզորությունից պակաս է 32 հազ կՎտ-ով և 245 հազ կՎտ-ով էլ 2016թ-ի փաստացի պատվիրված հզորությունից, որը պայմանավորված է եղել 2017թ-ին հուլիս-օգոստոս ամսներին ՀՇԳՑԷ չնախատեսված վթարային կանգառով, ինչի հետևանքով 2017թ-ի հուլիս ամսվա համար ընկերությանը պակաս է տրամադրվել շուրջ 132 հազ. կՎտ հզորություն, իսկ օգոստոսին՝ 12 հազ. կՎտ:

Ընկերությունը Իրանի գազի արտահանման ընկերությունից (National Iranian Gas Company) ներկրում է բնական գազ, որի մի մասը ԻԻՀ-ՀՀ սահմանին հանձնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին, իսկ մնացած մասը օգտագործում սեփական արտադրությունում:

2017թ-ին ներմուծվել է 376,955 հազ. խմ իրանական բնական գազ, որը ավել է 36,881 հազ խմ-ով 2017թ-ի պլանավորած քանակից և 10,562 հազ. խմ-ով 2016թ-ին փաստացի ներմուծված քանակից:

ԻԻՀ-ից ներմուծված գազի դիմաց իրանական կողմին Ընկերությունը պարտավորվում է հանդիպակաց արտահանել էլեկտրաէներգիա 1:3 հարաբերությամբ[1]: Իսկ Թավանիր ընկերության հետ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի պայմանագրի շրջանակներում իրականացվում են փոխհոսքերի գործարքը, որի շրջանակում 2017թ-ին ներմուծվել է 75,101 /այն իրացվել է ներքին շուկա/, որը 1,523 հազ. կՎտxժ պակաս է եղել 2016թ-ին փաստացի ներմուծված 76,624 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայից: 2016թ-ին ներմուծված փոխհոսքի դիմաց Ընկերությունը ԻԻՀ արտահանել է 106,768 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա: Սակայն 2017թ-ի ընթացքում Ընկերության փաստացի ներմուծված 75,101 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայի դիմաց արտահանում չի կատարվել ԻԻՀ՝ ՀԾԿՀ-ի 09.08.2017թ N344-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 135-րդ կետի պահանջի չբավարարման պատճառով:

2017թ-ին Ընկերությունը ԻԻՀ արտահանել է 1,224,336 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, որը 48,672 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայով ավել է 2016թ-ի փաստացի արտահանված 1,175,664 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայից: Ըստ սակագնային պլանի ԻԻՀ 2017թ-ի համար պլանավորած էր արտահանել 1,026,060 հազ կՎտxժ էլեկտրաէներգիա[2], սակայն փաստացի ավել է արտահանվել 198,276 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, ինչը պայմանավորված է վերանայված էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմներով: 2017թ-ին 1,224,336 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիան ԻԻՀ արտահանվել է գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում, իսկ ի տարբերություն 2017թ-ի՝ 2016թ-ին ԻԻՀ արտահանված 1,175,664 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայից 1,068,896 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիան արտահանվել է գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում, իսկ 76,624 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիան՝ փոխհոսքի:

ԻԻՀ-ից ներմուծված բնական գազից որոշակի քանակ Ընկերությունը իրացնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին[3]՝ ԻԻՀ-ՀՀ պետական սահմանին: Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանն իր հերթին գնված բնական գազի դիմաց պարտավորվում է Ընկերությանը տրամադրել էլեկտրաէներգիա 1:3.05 հարաբերակցությամբ[4] /տես գծապատկեր 2-ում/: Ձեռքբերված էլեկտրաէներգիան Ընկերությունը բացառապես արտահանում է ԻԻՀ: 2017թ-ին ԻԻՀ է արտահանվել բնական գազի դիմաց 1,224,336 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա /2016թ-ի հետ համեմատ 155,440 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիայով ավել/, որից 549,435 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիան ձեռք է բերվել Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից, մնացած 674.901 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիան՝ սեփական արտադրանքից: 2017թ-ի համար Ընկերությունը պլանավորել էր Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից ձեռք բերել շուրջ 294,940 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, սակայն ավել էլեկտրաէներգիա է ձեռք բերել 254,495 հազ. կՎտxժ-ով, փաստացի արտահանելով 549,435 հազ. կՎտxժ էլեկտրաէներգիա, ինչով էլ պայմանավորված գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակում ԻԻՀ ավել էլեկտրաէներգիա է արտահանվել:

[1] 1 մ3 բնական գազ - 3 կՎտժ էլեկտրաէներգիա

[2] 1000 Կվտժ էլեկտրաէներգիան 50 ԱՄՆ դոլար սակագնով

2017թ-ին Ընկերությունը Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին հանձնել է 147,440 հազ. խմ իրանական բնական գազ, որը շուրջ 34,346 հազ. խմ բնական գազով պակաս է 2016 թ-ի ընթացքում փաստացի հանձնած 181,786 հազ. խմ բնական գազից: 2017թ-ի համար պլանավորվել էր Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին իրացնել 96,700 հազ խմ իրանական բնական գազ, սակայն պայմանավորված ԻԻՀ-ից ավել ներմուծված բնական գազի քանակով, Ընկերությունը հնարավորություն է ունեցել 2017թ-ին փաստացի 50,745 հազ. խմ-ով ավել բնական գազ իրացնել Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին՝ մարելով կուտակված պարտքը: Այսպիսով 2017թ-ի ընթացքում փաստացի ԻԻՀ-ից ներմուծված 376,955 հազ. խմ բնական գազից 147,440 հազ. խմ-ը իրացրել է /հանձնել է ԻԻՀ-ՀՀ պետական սահմանին/ Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին:

Երևանի ՋԷԿ ՓԲ ընկերությունը էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ից գնում է նաև ռուսական բնական գազ[5]: 2017թ-ին ձեռք է բերել 104,056 հազ. խմ ռուսական բնական գազ, 2016թ-ի փաստացի ձեռք բերված 123,634 հազ. խմ բնական գազից 19,578 հազ. խմ բնական գազով պակաս: 2017թ-ի համար Ընկերությունը նախատեսել էր Երևանի ԳԳՄ-ից ձեռք բերել 103,906 հազ. խմ ռուսական բնական գազ, փաստացի ավել ձեռքբերելով 150 հազ. խմ: Այսպիսով Ընկերությունը 2017 թ-ի ընթացքում կայանի արդյունավետ աշխատանքի և ԻԻՀ-ից ավել ներմուծված բնական գազի արդյունքում ավելի քիչ ռուսական բնական գազ է ձեռք բերել Երևանի ԳԳՄ-ից:

Գազպրոմ-Արմենիա և Երևանի ՋԷԿ ընկերությունների միջև 2010թ-ի հոկտեմբերի 18-ին կնքված պայմանագրի շրջանակներում Ընկերությունը կարող է Գազպրոմ-Արմենիա ՓԲ ընկերությանը հանձնել տվյալ ամսում կամ հաշվետու ժամանակաշրջանում ԻԻՀ-ից ավել ներմուծված բնական գազը: Վերոնշյալ քանակի բնական գազը հետագա ամիսների ընթացքում Ընկերությունը անհրաժեշտության դեպքում հետ է գնում արտադրական նպատակով: 2017թ-ին արտադրական գործընթացներով պայմանավորված Գազպրոմ-Արմենիա ՓԲ ընկերությանը հանձնել է 53,187 հազ. խմ իրանական բնական գազ, և նույն քանակությունը 2017թ-ի ընթացքում հետ է ձեռքբերել Գազպրոմ-Արմենիա ՓԲ ընկերությունից:

[3] 2011 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված Բնական գազի և էլեկտրաէներգիայի փոխանակության (առուվաճառքի) մասին պայմանագրի շրջանակներում
[4] 1 մ3 բնական գազ – 3.05 կՎտժ էլեկտրաէներգիա
[5] 1 խմ 201,75 ԱՄՆ դոլար /առանց ԱԱՀ/ սակագնով, այս գնի հաշվարկում համաձայն պայմանագրի կիրառվում է հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ի ԿԲ-ի փոխարժեքը

## ԳԾԱՊԱՏԿԵՐ 1




## ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



# 2.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## *Եկամուտների և ծախսերի վերլուծություն*

| Հ/Հ | Ցուցանիշի անվանումը | | 2017 թ | | հազ. դրամներով |
|---|---|---|---|---|---|
| | | | պլանային | փաստացի | տարբերություն /4-5/ |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 |
| I | Ընդամենը եկամուտներ, այդ թվում | | 56,246,207.14 | 73,170,502.25 | 16,924,295.11 |
| 1 | էլեկտրաէներգիայի իրացումից եկամուտ, այդ թվում | | 24,887,347.41 | 26,605,676.39 | 1,718,328.98 |
| | 1.1 | էլեկտրաէներգիայի օգտակար առաքում ներքին շուկա | 12,083,169.86 | 13,963,047.87 | 1,879,878.01 |
| | 1.2 | Հզորության տրամադրում | 12,804,177.55 | 12,642,628.53 | (161,549.02) |
| 2 | Բնական գազի վաճառք | | 6,916,536.40 | 10,673,360.19 | 3,756,823.78 |
| 3 | Բնական գազի վաճառք /Գազ-գազ, 18.10.10թ պայմ/ | | - | 3,864,004.17 | 3,864,004.17 |
| 4 | Գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում էլեկտրաէներգիայի իրացումից հասույթ | | 24,442,323.33 | 29,754,827.47 | 5,312,504.14 |
| 5 | Գործառնական այլ եկամուտներ | | - | 920,607.76 | 920,607.76 |
| | 5.1 | Ծառայությունների մատուցումից եկամուտ | | 7,098.09 | 7,098.09 |
| | 5.2 | Այլ պաշարների վաճառքից եկամուտ | | 863,049.31 | 863,049.31 |
| | 5.3 | Արտարժույթի փոխարկումից եկամուտներ | | 1,668.74 | 1,668.74 |
| | 5.4 | Ակտիվներին վերաբերող շնորհներ | | 7,048.61 | 7,048.61 |
| | 5.5 | Այլ եկամուտներ | | 41,743.01 | 41,743.01 |
| 6 | Ֆինանսական եկամուտ | | - | 348,910 | 348,910 |
| 7 | Ոչ գործառնական այլ եկամուտներ, այդ թվում | | - | 1,003,116.27 | 1,003,116.27 |
| | 7.1 | Հիմնական միջոցների վաճառքներից եկամուտներ | | 246,083.42 | 246,083.42 |
| | 7.2 | Փոխարժեքային տարբերությունից առաջացած եկամուտ | | 757,032.85 | 757,032.85 |

| Հ/Հ | Ցուցանիշի անվանումը | | 2017 թ | | հազ. դրամներով |
|---|---|---|---|---|---|
| | | | պլանային | փաստացի | տարբերություն /4-5/ |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 |
| II | Ընդամենը ծախսեր, այդ թվում | | 52,103,939.90 | 80,293,823.43 | 28,189,883.52 |
| 8 | Ձեռք բերվող էներգակրի ծախս | | 9,995,524.21 | 10,122,840.24 | 127,316.02 |
| 9 | Ձեռք բերվող բնական գազ/Գազ-գազ/ | | - | 3,886,212.53 | 3,886,212.53 |
| 10 | Տեղափոխված բնական գազի դիմաց վճար | | 2,194,620.43 | 2,101,166.25 | (93,454.18) |
| 11 | Վճարումներ էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերություններին, այդ թվում | | 2,180,704.20 | 2,569,355.98 | 388,651.78 |
| | 11.1 | ԲԷՑ ՓԲԸ | 1,876,625.51 | 2,207,503.90 | 330,878.40 |
| | 11.2 | ԷԷՀՕ ՓԲԸ | 236,798.77 | 281,907.94 | 45,109.17 |
| | 11.3 | Հաշվարկային Կենտրոն ՓԲԸ | 67,279.92 | 79,944.14 | 12,664.22 |
| 12 | Գազ-էլեկտրաէներգիա պայմանագրի շրջանակներում Հրազդան 5-ից գնված էլեկտրաէներգիա | | 6,282,446.15 | 11,911,896.30 | 5,629,450.15 |
| 13 | ԻԻՀ-ից ձեռք բերված գազի ինքնարժեք | | 24,031,080.46 | 27,631,656.95 | 3,600,576.5 |
| 14 | Գնովի էլ-էներգիա /սեփական կարիքների համար/ | | 33,040.00 | 35,384.23 | 2,344.23 |
| 15 | Նյութական ծախսեր, այդ թվում | | 837,534.45 | 808,881.39 | (28,653.06) |
| | 15.1 | Ջուր | 375,035.66 | 296,574.44 | (78,461.23) |
| | 15.2 | Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր | 37,824.62 | 48,806.87 | 10,982.25 |
| | 15.3 | Պահեստամասեր | 240,606.98 | 245,404.81 | 4,797.83 |
| | 15.4 | Հումք նյութեր | 108,847.14 | 175,642.54 | 66,795.40 |
| | 15.5 | Այլ նյութեր | 69,749.29 | 31,042.73 | (38,706.56) |
| | 15.6 | Նյութական այլ ծախսեր | 5,470.76 | 11,410.00 | 5,939.24 |
| 16 | Մաշվածություն | | 4,341,600.00 | 4,079,967.00 | (261,633.00) |
| 17 | Նորոգման ծախսեր | | 252,900.00 | 66,485.95 | (186,414.05) |
| | 17.1 | Ընթացիկ նորոգում | 252,900.00 | 66,485.95 | (186,414.05) |
| 18 | Աշխատավարձ | | 696,000.00 | 696,191.92 | 191.92 |

| Հ/Հ | Ցուցանիշի անվանումը | | 2017 թ | | հազ. դրամներով |
|---|---|---|---|---|---|
| | | | պլանային | փաստացի | տարբերություն /4-5/ |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 |
| 19 | Այլ ծախսեր, այդ թվում | | 232,110.00 | 318,925.75 | 86,815.75 |
| | 19.1 | Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 19,180.00 | 12,010.00 | (7,170.00) |
| | 19.2 | Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 17,380.00 | 18,080.00 | 700.00 |
| | 19.3 | Աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ | 10,000.00 | 43,084.83 | 33,084.83 |
| | 19.4 | Բանկային ծախսեր | | 3,109.00 | 3,109.00 |
| | 19.5 | Պայմանագրային աշխատանքներ | 32,990.00 | 91,752.92 | 58,762.92 |
| | 19.6 | Այլ ծախսեր | 152,560.00 | 150,889.00 | (1,671.00) |
| 20 | Էներգակարգաբերման հետ կապված ծախսեր | | 44,720.00 | 44,569.00 | (151.00) |
| 21 | Հարկեր և պարտադիր այլ վճարներ, այդ թվում | | 81,770.00 | 105,437.33 | 23,667.33 |
| | 21.1 | Չփոխհատուցվող հարկեր | 9,150.00 | 20,830.64 | 11,680.64 |
| | 21.2 | Կարգավորման պարտադիր վճարներ | 42,160.00 | 54,370.69 | 12,210.69 |
| | 21.3 | Լիցենզիոն տարեկան տուրք | 30,460.00 | 30,236.00 | (224.00) |
| 22 | Վարկերի տոկոսների մարում | | 849,390.00 | 1,221,844.00 | 372,454.00 |
| 23 | Փոխարժեքով պայմանավորված վառելիքի ծախսի ճշգրտում | | 50,500.00 | - | (50,500.00) |
| 24 | Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | | - | 1,286,876.98 | 1,286,876.98 |
| | 24.1 | Տույժեր և տուգանքներ | | 305,557.01 | 305,557.01 |
| | 24.2 | Պաշարների օտարումից ծախսեր | | 905,218.33 | 905,218.33 |
| | 24.3 | Արտարժույթի փոխարկումից ծախս | | 13,861.00 | 13,861.00 |
| | 24.4 | Նախորդ տար.գործ.գործուն.ծախսեր (էական սխ.ուղղ.արդ.) | | 62,547.17 | 62,547.17 |
| 25 | Ոչ գործառնական այլ ծախսեր, այդ թվում | | - | 8,730,910.68 | 8,730,910.68 |
| | 25.1 | Հիմնական միջոցների լուծարումից ծախսեր | | 9,570.17 | 9,570.17 |
| | 25.2 | Հիմնական միջոցների օտարումից ծախսեր | | 177,695.51 | 177,695.51 |
| | 25.3 | Ֆինանսական ակտիվների արժեզրկում | | 8,457,039.00 | 8,457,039.00 |
| | 25.4 | Հիմնական միջոցների արժեզրկում | | 86,606.00 | 86,606.00 |
| 26 | Փոխարժեքային տարբերությունից առաջացած ծախսեր | | | 4,612,673.78 | 4,612,673.78 |
| III | Գործառնական գործունեության արդյունք | | 4,142,267.23 | (7,123,321.18) | |

## Հասույթ և ինքնարժեք

Ընկերությունը սեփական արտադրանքը իրացնում է ներքին շուկայում /ՀԷՑ ՓԲԸ/: Ընկերությունը ներքին շուկայում իրացնում է նաև Իրան Թավանիր փոխհոսքերից ներմուծված էլեկտրաէներգիան, ինչպես նաև պատվիրված հզորությունը: 2017թ-ին ներքին շուկա էլեկտրաէներգիայի իրացումից /ներառյալ փոխհոսքերը/ հասույթը կազմել է 13,963,048 հազ. դրամ, իսկ պատվիրված հզորությունից՝ 12,642,629 հազ. դրամ: Իրացված էլեկտրաէներգիայի ինքնարժեքը /ներառյալ փոխհոսքերը/ կազմել է 20,578,601 հազ. դրամ: Այսպիսով 2017թ-ին Ընկերությունը էլեկտրաէներգիայի վաճառք և հզորության տրամադրում գործարքների մասով ունեցել է 6,027,075 հազ. դրամի եկամուտ /աղյուսակ 1/:

Իրան Թավանիր փոխհոսքերի գործառույթի շրջանակներում Ընկերությունը ստացել է 1,180,251 հազ. դրամ հասույթ, ներմուծված էլեկտրաէներգիայի ինքնարժեքը կազմել է 1,188,017 հազ. դրամ: Այսինքն այս գործարքի Ընկերության վնասը կազմել է 7,766 հազ. դրամ:

| ԱՂՅՈՒՍԱԿ 1 | Հասույթ | Ինքնարժեք |
|---|---|---|
| | Հազար դրամ | Հազար դրամ |
| **Էլեկտրաէներգիայի վաճառք, հզորության տրամադրում ՀԷՑ-ին.** | 26 605 676 | 20 578 601 |
| **Սեփական արտադրությունից** | 12 782 797 | 19 390 584 |
| **Իրան Թավանիր փոխհոսքեր** | 1 180 251 | 1 188 017 |
| **Հզորության տրամադրում** | 12 642 629 | - |

Ընկերությունը գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում 2017թ-ին ունեցել է 1,265,637 հազ դրամի եկամուտ, 29,754,827 հազ դրամի հասույթ, իսկ ինքնարժեքը կազմել է 28,489,190 հազ դրամ, սեփական արտադրանքից՝ 16,577,524 հազ. դրամ ինքնարժեքով և Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից գնված էլեկտրաէներգիայից 11,911,666 հազ. դրամ ինքնարժեքով /աղյուսակ 2/:

| ԱՂՅՈՒՍԱԿ 2 | Հասույթ | Ինքնարժեք |
|---|---|---|
| | Հազ. դրամ | Հազ. դրամ |
| **Էլեկտրաէներգիայի վաճառք (արտահանում).** | 29 754 827 | 28 489 190 |
| **Սեփական արտադրությունից** | 16 495 057 | 16 577 524 |
| **Գազպրոմ Արմենիա Հրազդան 5 կայան (16.12.11թ. պայմանագիր)** | 13 259 770 | 11 911 666 |

ԻԻՀ-ից ներմուծված բնական գազից որոշակի մաս Ընկերությունը ԻԻՀ-ՀՀ սահմանին հանձնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին՝ 16.12.2011թ և 18.10.10թ պայմանագրերի համաձայն, որոնց շրջանակներում իրականացված գործարքների արդյունքում Ընկերությունը 2017թ-ին ունեցել է համապատասխանաբար 10,673,360 հազ. դրամ և 3,864,004 հազ. դրամ հասույթ, իսկ ինքնարժեքը կազմել է՝ 10,681,296 հազ. դրամ և 3,941,748 հազ. դրամ: Ամփոփելով կարող ենք փաստել, որ այս երկու պայմանագրերի շրջանակներում իրականացրած գործարքների արդյունքում կրել է համապատասխանաբար 7,936, հազ. դրամ և 77,744 հազ. դրամ վնաս /աղյուսակ 3/:

| ԱՂՅՈՒՍԱԿ 3 | Հասույթ | Ինքնարժեք |
|---|---|---|
| | Հազար դրամ | Հազար դրամ |
| **Բնական գազի վաճառք.** | 14 537 364 | 14 623 043 |
| **Գազպրոմ Արմենիա Հրազդան 5 կայան (16.12.11թ. պայմանագիր)** | 10 673 360 | 10 681 296 |
| **Գազպրոմ Արմենիա (18.10.10թ. պայմանագիր)** | 3 864 004 | 3 941 748 |

## Գնովի էլեկտրաէներգիայի գծով ծախս

2017թ ՀՇԳՑ էներգաբլոկը 8760 ժամից փաստացի աշխատել է 7769 ժամ, այսինքն կանգառը կազմել է 991 ժամ: Մինչդեռ 2017թ-ի համար նախատեսված նորոգումների համար կանգառը պետք է կազմեր 384 ժամ, այսինքն կայանի 607 ժամ չպլանավորված վթարային կանգառի հետևանքով անհրաժեշտ էլեկտրաէներգիան ձեռք է բերվել ՀԷՑ ՓԲ ընկերությունից: Սեփական կարիքների համար ձեռքբերվող էլեկտրաէներգիայի համար Ընկերությունը պլանավորել էր կատարել 33,040 հազ. դրամի ծախս, սակայն փաստացի կատարել է 35,384.23 հազ. դրամի:

## Աշխատավարձ

«Աշխատավարձ» հոդվածով փաստացի ծախսը կազմել է 696,192.92 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության աշխատողների թվաքանակն է 224 մարդ, որից վարչական անձնակազմը՝ 83 աշխատող (վճարված աշխատավարձը՝ 273,019 հազ. դրամ), արտադրական անձնակազմը՝ 141 աշխատող (վճարված աշխատավարձը՝ 423,173 հազ. դրամ): Այս հոդվածով 2017թ. համար նախատեսված է եղել 696,000 հազ. դրամ: Այսինքն գերակատարումը նախատեսված մեծության համեմատ կազմել է 191.92 հազ. դրամ:

[6]Միջին սակագին՝ 25.504 դրամ

## Նյութական ծախսեր

Նյութական ծախսերը 2017թ-ին փաստացի կազմել են 808,881,39 հազ. դրամ, նախատեսված 837,534.45 հազ. դրամի փոխարեն, այսինքն տնտեսումը կազմել է 28,653,06 ,հազ. դրամ: Նյութական ծախսերում ներառված են էներգաբլոկի բնականոն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ջրի /Վեոլիա ջուր ՓԲԸ/, քիմիական նյութերի և ինհիբիտորների / Pall Eurasia LLC, Air Liquide Deutschland GMBH, Gorex Analith GmBH, Hungarian Trading Company KFT, Ինտերավիա ՍՊԸ, Յունիքիմ ՍՊԸ, Սադիրան ՍՊԸ, Սպարտլուս ՍՊԸ, Կենցաղային քիմիայի գործարան ՍՊԸ/, քիմիական լաբորատոր ռեագենտների, կոմպրեսորների և այլ սարքերի յուղերի, քսայուղերի /Նակօստա ՍՊԸ, Սպայկա ՍՊԸ/, վթարային իրավիճակների ժամանակ անհրաժեշտ սարքավորումների և պահեստամասերի, / SULZER pumps sweden AB, DHP ENGINEERING Go LTD, DSL Parts OSC, Geosyn Tec LLC, Hyosung Corporation Industrial Group, MTR Engineering OU, Maxcom CO LTD, Pall Eurasia LLC, ProMinent Gmbh, SAMJIN INDUSTRIAL CO LTD, SEIBOLD Wasser-Analysatorenfabrik GmbH, SULZER pumps sweden AB/ GT, ST 7 և այլ ֆիլտրերի / Gfoller Fahrzeugbau und Containertechnik, Hungarian Trading Company KFT, MANN+HUMMEL Vokes Air GmbH & Co.OHG, SF-FILTER S.p.z.o.o/ տնտեսական և գրենական ապրանքների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների պահպանման (վառելիք, յուղ և այլ նյութեր), ընթացիկ նորոգման գումարները /Ավտոսերվիս-1 ՍՊԸ, Արմենիա ինշուրանս ապահովագրական ՍՊԸ, Ռոսգոսստրախ-Արմենիա ապահովագրական ՓԲԸ, Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի Ավտոգազ ՍՊԸ, Գարանտսերվիս ՍՊԸ, Գուրիկ ՍՊԸ, Մ-Բի-Ռ ՍՊԸ, Ֆլեշ ՍՊԸ, Մոսէսքո ՍՊԸ, Վարմէքս ՍՊԸ, Տոյոտա Երևան ՍՊԸ, Ֆլեշ մոթորս ՍՊԸ/:

## Մաշվածության գծով ծախս

«Մաշվածություն» հոդվածով ծախսը էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության սակագներով տրամադրվում է մաշված հիմնական միջոցները նորերով փոխարինելու համար՝ համաձայն հաստատված ներդրումային ծրագրերի: Այդ իսկ պատճառով այս հոդվածով հաշվեգրված ծախսը և նախահաշվով պլանավորված ծախսը միմյանց հետ համադրելի չեն: 2017թ. Ընկերությունը պլանավորված 4,341,600.0 հազ. դրամի մաշվածության գծով ծախսը , որը կազմված է սակագնով հաստատված 332400.0 հազ. դրամ մաշվածության գծով ծախսից և 4009200.0 հազ. դրամ ճապոնական վարկի մայր գումարի մարում ծախսից : Այս հոդվածով փաստացի հաշվեգրված ծախսը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 4,079,967.0 հազ.դրամ:

## Նորոգման ծախսեր

Նորոգման ծախսեր հոդվածով 2017թ-ին փաստացի կատարվել է 66,485.95 հազ. դրամի ծախս, նախատեսված 252,900 հազ. դրամի փոխարեն, այսինքն տնտեսումը կազմել է 186,414.05 հազ. դրամ: Ընթացիկ նորոգման ծախսերում ներառված են գազի քրոմատոգրաֆի աուդիտի և կարգաբերման տարեկան սպասարկման ծախսերը /Emerson LLC/, վթարային սպասարկման աշխատանքները /Fuji Elektric Co LTD/, ՀՇԳՑԷ 1 էներգաբլոկի վերանորոգման աշխատանքները, մալուխների ապամոնտաժումը /Հիդրոէլեկտրամոնտաժ ՓԲԸ/, հակակորոզիոն պաշտպանության ծախսերը /Քիմպաշտպանություն Օտմիսկ ՍՊԸ/, օդորակիչների նորոգումը /Էկո-ինջիներինգ ՍՊԸ/, ՀՇԳՑԷ 1 էներգաբլոկի մաքրման աշխատանքներ /Մավշին ՍՊԸ/, պոմպերի /Սինխրոն ՍՊԸ/ և տանիքի նորոգման աշխատանքները /Արա-Արաքս գրուպ ՍՊԸ/:

## Այլ ծախսեր

Այլ ծախսեր հոդվածով 2017թ-ին փաստացի կատարվել է 318,925.75 հազ. դրամի ծախս՝ նախատեսված 232,110 հազ. դրամի փոխարեն, այսինքն գերածախսը կազմել է 86,815.75 հազ. դրամ:



## *Այլ ծախսերի հոդվածում ներառված են հետևյալ ծախսային հոդվածները՝*

Ընկերությունը 2017թ-ին փաստացի կատարել է 12,010 հազ. դրամի գործուղման և ներկայացուցչական ծախսեր, որով իրականացվել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի շրջանակներում միջազգային գործընկերների հետ պաշտոնական բանակցությունների և փաստաթղթերի ստորագրման անհրաժեշտությամբ պայմանավորված այցելություններ ու գործուղումներ, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև գազի և էլեկտրաէներգիայի հետ կապված միջպետական հուշագրերով նախատեսված երկու փոխշահավետ գործառույթի շրջանակներում կողմերի (Թավանիր և ԻԳԱԸ) միջև հաստատված փոխադարձ բանակցություններ, երկարատև խորհրդակցությունների և քննարկումների ընդմիջումների ժամանակ թեթև սննդի կազմակերպում, տրանսպորտային աջակցություն այդ անձանց միջոցառումների կազմակերպման վայր և հետադարձ տեղափոխում, պաշտոնական ընթրիք, հուշանվերների ձեռքբերում և այլ նմանատիպ ծախսեր: Այս հոդվածով տնտեսումը կազմել է 7,170 հազ. դրամ:

2017թ-ի համար փոստի և հեռահաղորդակցության ծառայությունների գծով, որը ներառում է Ընկերության հեռախոսակապի, ինտերնետային և փոստային հաղորդակցության ծառայությունները /Արմենիա Տելեֆոն Կոմպանի ՓԲԸ, Արմենիա Դեյթաքոմ Քամփանի ՓԲԸ, ՄՏՍ Հայաստան, Յուքոմ ՍՊԸ/: Այս հոդվածի մասով փաստացի կատարվել է 18,080 հազ. դրամի ծախս, նախատեսված 17,380 հազ. դրամի փոխարեն, այսինքն գերածախսը կազմել է 700 հազ. դրամ:

2017թ-ին փաստացի կատարել է 43,084.83 հազ. դրամի աուդիտորական և խորդհրդատվական ծախսեր, նախատեսված 10,000 հազ. դրամի փոխարեն, ասյինքն այս մասով Ընկերության գերածախսը կազմել է 33,084.83 հազ. դրամ: Ընկերության և «ՍՈՍ աուդիտ» ՍՊԸ /իրավահաջորդ/ հետ 2016թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի (Պայմանագիր ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ N 25/16) շրջանակներում 2017թ-ին փաստացի աուդիտորական ծառայությունների գծով ծախսը կազմել է 11,655.5 հազ. դրամ: Իսկ խորհրդատվական ծառաությունների մասով՝ 31,419.5 հազ. դրամ:

Բանկային ծախսերը հիմնականում ներառում են Ընկերության ընթացիկ հաշիվների սպասարկման և արտարժութային փոխանցումների համար գանձվող միջնորդավճարները: 2017թ-ին փաստացի կատարվել է 3,109 հազ. դրամի բանկային ծախս հիմնականում պայմանավորված անհրաժեշտ նյութերի ու պահեստամասերի վճարումներով, որոնք Ընկերությունն իրականացրել է անմիջապես արտասահմանյան մատակարարներից՝ կնքված երկարատև սպասարկման պայմանագրերի հիման վրա:

Պայմանագրային աշխատանքներ հոդվածով ծախսերը 2017թ-ին փաստացի կազմել են 91,752.92 հազ. դրամ՝ նախատեսված 32,990 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս հոդվածի մասով գերածախսը կազմել 58,762.92 հազ. դրամ, որը պայմանավորված է աութսորսինգային ծառայությունը սակագնային ծախսերում չներառված լինելով: Այս հոդվածի ծախսերն իր մեջ ներառում է պահնորդային ծառայությունը /ՀՀ Ուս. Պետ. պահ. գլխ. Վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատ/, աութսորսինգային ծառայությունը / Դի Ջի Քոնսալթինգ ՍՊԸ/, մաքսային բրոքերական ծառայություն /Յու Թի Էս Բրոք ՍՊԸ, Ֆաստ բրոք սերվիս ՍՊԸ/, համակարգչային տեխնիկայի սպասարկման ծառայություն / Կոմպյուտեր Սրեվիս ՍՊԸ/, ծրագրային սպասարկման ծառայություն, սուրհանդակային / Հայփոստ ՓԲԸ, Յումակս ՍՊԸ/ և բեռնափոխադրում, տերմինալի ծառայություն, գույքի գնահատման ծառայություն /Արթին Էնթրփրայս ՍՊԸ/ և այլ:

Չպլանավորված ծախսերի մասով Ընկերությունը 2017թ. փաստացի կատարել է 150,889.0 հազ. դրամի ծախս՝ նախատեսված 152,560 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս հոդվածի մասով Ընկերության տնտեսումը կազմել է 1,671 հազ. դրամով:

## Հարկեր և պարտադիր այլ վճարներ

Հարկեր և պարտադիր այլ վճարներ հոդվածով փաստացի ծախսը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 105,437.33 հազ. դրամ, նախատեսված 81,770 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս հոդվածի մասով Ընկերության գերածախսը կազմել է 23,667.33 հազ. դրամ: Չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ, աղբահանության վճար, բնապահպանական վճար) մասով փաստացի ծախսը կազմել է 20,830,64 հազ. դրամ, նախատեսված 9,150 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս մասով գերածախսը կազմել է 11,680.64 հազ. դրամ, որը պայմանավորված է աղբահանության և բնապահպանական վճարները այլ ծախսային հոդվածում ներառելով: Գործող 5 (հինգ) լիցենզիաների մասով լիցենզիոն տարեկան տուրքի գծով Ընկերության փաստացի ծախսը կազմել է 30,236 հազ. դրամ, նախատեսված 30,460 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս մասով տնտեսումը կազմել է 224 հազ. դրամ: Կարգավորման պարտադիր վճարների գծով Ընկերության փաստացի ծախսը կազմել է 54,370.69 հազ. դրամ, նախատեսված 42,160 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս մասով գերածախսը կազմել է 12,210.69 հազ. դրամ:

## Վարկերի տոկոսների մարում

Ընկերության վարկերի տոկոսների գծով ծախսը նախատեսվել էր 849,390 հազ. դրամ, սակայն 2017թ փաստացի կազմել է 1,221,844.0 հազ. դրամ, որից 48.843 հազ. դրամը կապիտալացվել է անավարտ կապիտալ շինարարության վրա:

## Վարկերի և փոխառությունների շարժը

ա) Ընթացիկ վարկեր և փոխառություններ

| Վարկեր և փոխառություններ | Տարեսկզբի մնացորդ | Տարվա շարժ | | | | Տարեվերջի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | Տրամադրում | Տոկոսի հաշվեգրում | Փոխարժեքային տարբերություն | Մարում | |
| **Վարկեր առևտրային բանկերից** | | | | | | |
| **ԱՄՆ դոլարով** | 3,591,806 | 1,387,426 | 97,940 | 7,642 | (4,166,359) | 918,455 |
| **Եվրոյով** | - | 3,487,097 | 101,066 | 237,792 | (2,573,444) | 1,252,511 |
| **Փոխառություններ** | | | | | | |
| **Որոտան** | 4,593,490 | - | - | - | - | 4,593,490 |
| **Ընդամենը** | 8,185,296 | 4,874,523 | 199,006 | 245,434 | (6,739,803) | 6,764,456 |

բ) Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ

| Վարկեր | Տարեսկզբի մնացորդ | Տարվա շարժ | | | | Տարեվերջի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|
| | | Տրամադրում | Տոկոսի հաշվեգրում | Փոխարժեքային տարբերություն | Մարում | |
| **JICA, ARM-P2** | 102,366,872 | - | 781,359 | 3,858,225 | (4,462,485) | 102,543,971 |
| **IBRD 8615-AM** | 8,213,588 | 839,011 | 209,137 | 10,041 | (203,592) | 9,068,185 |
| **IBRD 8495-AM** | 1,938,889 | 1,511,569 | 81,185 | 7,647 | (75,164) | 3,464,126 |
| **Ընդամենը** | 112,519,349 | 2,350,580 | 1,071,681 | 3,875,913 | (4,741,241) | 115,076,282 |

## Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր

Գործառնական այլ եկամուտներ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտները կազմել են 920,607.76 հազ. դրամ, որից ծառայությունների մատուցումից եկամուտը՝ 7,098.09 հազ. դրամ, այլ պաշարների վաճառքից եկամուտը 863,049.31 հազ. դրամ, ակտիվների շնորհներից եկամուտը՝ 7,048.61 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 41,743.01 հազ. դրամ:

Գործառնական այլ ծախսեր հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր ծախսերը կազմել են 1,286,876.98 հազ. դրամ, որից տույժերի և տուգանքների գծով ծախսը կազմել են 305,557.01 հազ. դրամ, այն իրենից ներկայացնում է դատական ծախսերը 306.52 հազ. դրամ, և տարբեր հարկատեսակների գծով հաշվարկված տույժերը՝ 305,250.48 հազ. դրամ (շահութահարկի 2015-2016թթ հաշվարկների ճշգրտման արդյունքում առաջացած կանխավճարների նկատմամբ հաշվարկված տույժերի գծով՝ 106,736.77 հազ. դրամ, հարկային ստուգման ակտով արձանագրված շահութահարկի գծով տույժ՝ 27,426.34, իսկ ավելացված արժեքի հարկի գծով՝ 6,085.62 հազ. դրամ, ավելացված արժեքի հարկի 2015թ հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած տույժերի գծով՝ 164,985.2 հազ. դրամ): Պաշարների օտարումից ծախսերը կազմել են 905,218.33 հազ դրամ, որից Ջեներալ էլեկտրիկ ընկերությանը վաճառված պահեստամասերի հաշվեկշռային արժեքը կազմում է 845,539.88 հազ. դրամ, վաճառված հումք և նյութերի ինքնարժեքը՝ 40,370.03 հազ. դրամ, իսկ դուրս գրված այլ նյութերի ինքնարժեքը 19,308.42 հազ. դրամ: Ընկերությունն արտարժույթով իրականացված գործարքները փոխարկում է դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը, իսկ արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժութային օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում Ընկերության եկամուտները արտարժույթի փոխարժեքային տարբերությունից կազմել են 1,668.74 հազ. դրամ, իսկ ծախսերը՝ 13,861 հազ. դրամ: Այսպիսով, դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, Ընկերությունը 2017թ. ընթացքում ստացել է 12,192.26 հազ. դրամ վնաս: Նախորդ տարիների էական սխալների ուղղման արդյունքում առաջացած ծախսը՝ 62,547.17 հազ. դրամ:

Ֆինանսական եկամուտ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտը կազմել է 348,910.00 հազ. դրամ: Ընկերությունը 2018թ-ին նախատեսվող կապիտալ նորոգման ծախսերի իրականացման նպատակով «Հայբիզնեսբանկ» և «Արդշինբանկ» ՓԲ ընկերություններում բացել է ավանդային հաշիվներ և 2017թ-ին ստացվել է 348,910.00 հազ. դրամի եկամուտ կուտակված ավանդի հաշվեգրած տոկոսից, ավանդի մնացորդը առ 01.01.2018թ կազմել է 5,492,000 հազ. դրամ:

Ոչ գործառնական այլ եկամուտներ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտները կազմել են 1,003,116.27 հազ. դրամ, որից հիմնական միջոցների վաճառքից եկամուտները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 246,083.42 հազ. դրամ, որի մնացորդային արժեքը կազմել է 177,695.51 հազ. դրամ, այսինքն այս մասով Ընկերության եկամուտը կազմել է 68,387.91 հազ. դրամ: Փոխարժեքային տարբերություններից առաջացած եկամուտը՝ 757,032.85 հազ. դրամ մինչդեռ փոխարժեքային տարբերություններից առաջացած ծախսերը՝ 4,612,673.78 հազ. դրամ, այս մասով Ընկերության վնասը կազմել է 3,855,640.93 հազ. դրամ:

Ոչ գործառնական այլ ծախսեր հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր ծախսերը կազմել են 8,730,910.68 հազ. դրամ, որից հիմնական միջոցների լուծարումից ծախսը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 9,570.17 հազ. դրամ, իսկ հիմնական միջոցների արժեզրկումը՝ 86,606 հազ. դրամ, ֆինանսական ակտիվների արժեզրկումը՝ 8,457,039 հազ. դրամ, որից 8,386,464 հազ. դրամը կազմում է Քիմպրոմ մենեջմենթ ՓԲԸ տրամադրած փոխառությունները:

Արդյունքում Ընկերության վնասը կազմում է 7,123,321.18 հազ. դրամ:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

# 03

## 3.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Ֆինանսական վիճակ | 2017թ | 2016թ | Տարբերություն, % |
|---|---|---|---|
| | փաստացի | փաստացի | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| ոչ ընթացիկ ակտիվներ | 132,630,298 | 133,177,784 | -0.41 |
| ընթացիկ ակտիվներ | 23,889,725 | 22,430,761 | 6.50 |
| ընդամենը ակտիվներ | 156,520,023 | 155,608,545 | 0.59 |
| ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 10,424,652 | 12,047,679 | -13.47 |
| Էմիսիոն եկամուտ | 2,692,828 | 1,069,801 | 151.71 |
| Վերագնահատման պահուստ | 8,739,014 | 10,775,254 | -18.90 |
| Կուտակված վնաս | -20,002,418 | -13,466,851 | 48.53 |
| ընդամենը կապիտալ | 1,854,076 | 10,425,883 | -82.22 |
| ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Վարկեր և փոխառություններ | 115,076,282 | 112,519,349 | 2.27 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 32,289 | 33,295 | -3.02 |
| ոչ ընթացիկ պարտավորություններ | 115,108,571 | 112,552,644 | 2.27 |
| ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Վարկեր և փոխառություններ | 6764456 | 8185296 | -17.36 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 411,828 | 417,871 | -1.45 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 32,381,092 | 24,026,851 | 34.77 |
| ընթացիկ պարտավորություններ | 39,557,376 | 32,630,018 | 21.23 |
| ընդամենը պարտավորություններ | 154,665,947 | 145,182,662 | 6.53 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 156,520,023 | 155,608,545 | 0.59 |

2017 թ ընկերության հիմնական միջոցները ավելացել են 13,787,721 հազ դրամով, որը իրենից ներկայացնում է

| | հազար դրամ |
|---|---|
| Տեղակայման ենթակա պահեստամասեր | 10,502,107 |
| Անավարտ կապիտալ շինարարություն | 3,044,190 |
| Կապիտալ նորոգում | 89,366 |
| Մատակարարներից գնված | 59,680 |
| Այլ մուտքեր | 92,378 |
| Ընդհանուր | 13,787,721 |

իսկ մաշվածության գծով ծախսը կազմում է 4,079,968 հազ. դրամ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը ընկերությունում գնահատվում է պարբերաբար: 2017 թ. ընկերությունը իրականացրել է ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատում և արժեզրկումից կորստի ճանաչում համաձայն ՀՀՄՍ 39 ստանդարտի և 8,386,464 հազ. դրամի չափով դուրս է գրվել ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվը, որն իրենից ներկայացնում է Քիմպրոմ մենեջմենթ ՓԲԸ տրամադրած փոխառությունները:

31.12.2017թ.-ի դրությամբ Ընկերությունը ունի կուտակված բանկային ավանդ 5,492,000 հազ. դրամի չափով և լրացուցիչ առևտրային վարկեր չի ներգրավի 2018թ. գազատուրբինի վերազինման համար :

31.12.2017թ.-ի դրությամբ անկախ գնահատողի կողմից իրականացվել է հիմնական միջոցների վերագնահատում, ներառյալ՝ հին էնեգաբլոկի գնահատում ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն: Վերագնահատման պահուստը նվազել է 2,036,240 հազ. դրամի չափով՝ գնահատման արդյունքում հիմնական միջոցների վերագնահատումից նվազումը կազմել է 1,810,608 հազ. դրամ:

2017թ. ՀՀ Կառավարության 17.08.2017թ.-ի N 1012-Ա որոշումով իրականացվել է կանոնադրական կապիտալի նվազեցում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցման միջոցով՝ ընկերության մեկ բաժնետոմսի գինը 31.12.2017թ.-ի դրությամբ կազմել է 4,586 դրամ մինչ այդ սահմանված 5,300 դրամի փոխարեն:

Սակայն հաշվետու տարում կրած 7,123,321 հազ. դրամի չափով ֆինանսական զգալի վնասի արդյունքում, որի արդյունքում հաշվետու ամսաթվի դրությամբ կուտակված վնասը կազմում է 20,002,418 հազ. դրամ, կանոնադրական կապիտալի գումարը շարունակում է ավել լինել զուտ ակտիվների գումարից:

Առևտրային բանկերից ստացված վարկերը 2017թ.-ին նվազել են 1,420,840 հազ. դրամով, որոնք ամբողջությամբ մարվել են 2018 թ. հունվարին:

Ընկերության ոչ ընթացիկ պարտավորությունները 2017թ-ին 2016թ-ի հետ համեմատ ավելացել են 2,556,933 հազ. դրամով, քանի որ «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» շրջանակներում Ընկերության ենթակայանի վերակառուցման ծրագիրը ավարտվում է 2018թ. և 1,511,569 հազ. դրամի մասհանումը բաժին է ընկել 2017թ-ին:

| | Ընթացիկ (ա) | | Ոչ ընթացիկ (բ) | |
|---|---|---|---|---|
| | 2017թ.դեկ տեմբերի 31-ի դրությամբ | 2016թ.դեկ տեմբերի 31-ի դրությամբ | 2017թ.դեկ տեմբերի 31-ի դրությամբ | 2016թ.դեկ տեմբերի 31-ի դրությամբ |
| **Ապահովված վարկ ֆինանսների նախարարությունից** | - | - | 115,076,282 | 112,519,349 |
| **Ապահովված բանկային վարկեր** | 2,170,966 | 3,591,806 | - | - |
| **Այլ փոխառություններ** | 4,593,490 | 4,593,490 | - | - |
| **Ընդհանուր** | 6,764,456 | 8,185,296 | 115,076,282 | 112,519,349 |

2017թ. Ընկերությունը կրճատել է առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, իսկ աճը պայմանավորված է Ջեներալ Էլեկտրիկ ընկերության կողմից մատակարարված պահեստամասերի դիմաց առաջացած ընթացիկ պարտավորությանը, որը ըստ պայմանագրի կմարվի 2018թ. սեփական միջոցների հաշվին:

## 3.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

| Ցուցանիշներ | 2017 | 2016 | Փոփոխություն, % |
|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | |
| Հասույթ | 70,897,868 | 70,031,636 | 1.24 |
| Վաճառքի ինքնարժեք | -63,695,929 | -63,024,140 | 1.07 |
| Համախառն շահույթ | 7,201,939 | 7,007,496 | 2.77 |
| Այլ եկամուտ | 76,539 | 459,376 | -83.34 |
| Վարչական ծախսեր | -563,976 | -601,260 | -6.20 |
| Այլ ծախսեր | -1,330,655 | -2,735,603 | -51.36 |
| Գործառնական գործունեությունից շահույթ | 5,383,847 | 4,130,009 | 30.36 |
| Ֆինանսական եկամուտ | 348,910 | - | - |
| Ֆինանսական ծախսեր | -1,221,844 | -1,343,880 | -9.08 |
| Ֆինանսական ակտիվների արժեզրկում | -8,457,039 | - | - |
| Հիմնական միջոցների արժեզրկում | -86,606 | - | - |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ), զուտ | -3,855,641 | -3,852,409 | 0.08 |
| Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/(կորուստ), զուտ | 58,818 | - | - |
| Վնաս մինչև հարկումը | -7,829,555 | -1,066,280 | 634.29 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում /(ծախս) | 706,234 | -681,576 | -203.62 |
| Տարվա վնաս | -7,123,321 | -1,747,856 | 307.55 |
| EBITDA | 3,572,214 | 2,165,730 | 64.94 |

Վարչական և այլ ծախսերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Ընկերությունը 2017թ. հիմնականում ունեցել է ծախսերի տնտեսումներ, ինչն առավելապես պայմանավորված է Ընկերության ղեկավարության կողմից ծախսերի նպատակային և խիստ տնտեսող քաղաքականության կիրառմամբ, ինչի հետևանքով գործառնական գործունեությունից շահույթի աճը 2016թ համեմատ կազմել է 30.36 տոկոս:

2017թ առևտրային վարկերի մարման հետևանքով 9.08 տոկոսով կրճատվել են տոկոսային ծախսերը:

Ընկերության ստացված վարկերը և փոխառությունները արտահայտված են ճապոնական իենով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, որի հետևանքով ընկերությունը կրել է վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից 3,855,641 հազ. դրամի չափով:

EBITDA ցուցանիշը 2017թ կազմել է 3,572,214 հազ. դրամ, ինչը 1,406,484 հազ. դրամով կամ 64.94 տոկոսով գերազանցում է 2016թ նույն ցուցանիշը :

# 3.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ

| Ցուցանիշներ | 2017 | 2016 | Փոփոխություն, % |
|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | | |
| Իրացումից մուտքեր | 51,727,009 | 59,727,693 | -13.40 |
| Մատակարարներին վճարումներ | -39,163,283 | -60,771,672 | -35.56 |
| Աշխատակիցներին վճարումներ | -528,732 | -474,483 | 11.43 |
| Հարկերի վճարում | -1,288,088 | -2,766,815 | -53.45 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 10,746,906 | -4,285,277 | -350.79 |
| Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր | | | |
| Տրամադրված փոխառությունների մարում | - | 1,702 | - |
| Ավանդներից տոկոսային մուտքեր | 348,910 | - | - |
| Հիմնական միջոցների դիմաց վճարումներ | -2,513,550 | -51,343 | 4,795.60 |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 347,805 | - | - |
| Ոչ նյութական ակտիվների դիմաց վճարումներ | - | -6,026 | - |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -1,816,835 | -55,667 | 3,163.76 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր | | | |
| Վարկերից և փոխառություններից մուտքեր | 7,156,398 | 21,653,110 | -66.95 |
| Վարկերի և փոխառությունների մարում | -10,202,002 | -19,341,038 | -47.25 |
| Վճարված տոկոսներ | -1,279,042 | -1,329,931 | -3.83 |
| Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր | - | 1,789,018 | - |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | -4,324,646 | 2,771,159 | -256.06 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 4,605,425 | -1,569,785 | -393.38 |
| Փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա | -13,403 | -84,644 | -84.17 |
| Փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով | 19,498 | 15,968 | 22.11 |
| Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի | 1,461,395 | 3,099,856 | -52.86 |
| Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի | 6,072,915 | 1,461,395 | 315.56 |

## 3.3 ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| Ցուցանիշ | Հաշվարկի բանաձև | Նորմատիվ մեծություն | 2017թ | 2016թ |
|---|---|---|---|---|
| **Ընթացիկ լիկվիդայնության գործակից** | Ընթացիկ ակտիվներ/ Ընթացիկ պարտավորություններ | ≥2 | 0.60 | 0.69 |
| **Ֆինանսական անկախության գործակից** | կապիտալ / հաշվեկշիռ | ≥0.5 | 0.01 | 0.07 |
| **Ինքնավարության գործակից** | Կապիտալ + ՈՉ ընթացիկ պարտավորություններ) / հաշվեկիռ | ≥0.75 | 0.75 | 0.79 |
| **Պարտքի գործակից** | սեփական կապիտալ/ զուտ պարտք | - | 1.60 | 8.74 |

# ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 04

Ընկերությունը շարունակաբար ձեռնարկում է միջոցներ բացահայտելու Ընկերության ունեցած կադրերի, նրանց աշխատանքի մոտիվացիայի պայմանների համապատասխանությունն իր կողմից նախանշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պահանջներին, միաժամանակ, Ընկերության համար որպես միջնաժամկետ ցուցանիշ է համարվում անձնակազմի սոցիալական զարգացումը, կրթական մակարդակի բարձրացումը, երիտասարդ մասնագետների ներգրավումը, այսինքն՝ նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական ավելացումը: «Երևանի ՋԷԿ» ՓԲ ընկերության և աշխատողների արհեստակցական միության միջև 2017թ. նոյեմբերի 1-ին կնքվել է նոր կոլեկտիվ պայմանագիր, որով էապես բարելավվել են աշխատողների պայմանները:

*Աշխատակազմի կառուցվածքը տարիքային դասակարգման կտրվածքով*




*Ղեկավար անձնակազմ*




**78** հոգի

*Մասնագետ/ Ծառայող*




**49** հոգի

*Բանվոր*




**97** հոգի



# 05 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## 5.1 ՀՇԳՑ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ GT13E2 MXL ՏԻՊԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ն 01.08.2018-20.09.2018թ իրականացնելու է ՀՇԳՑ էներգաբլոկի GT13E2 MXL տիպի գազատուրբինի վերակառուցում՝ MXL2 աշխատանքային ռեժիմով աշխատելու համար: ՀՇԳՑ էներգաբլոկի վերազինման արդյունքում կբարելավվեն հետևյալ ցուցանիշները.

- 220 ՄՎտ-ից այն կդառնա 227 ՄՎտ և կկրճատվի վառելիքի տեսակարար ծախսերը՝ 258,1 գր/կՎտ×ժ-ից մինչև 252,8 գր/կՎտ×ժ,
- էներգաբլոկի ՕԳԳ-ի բարձրացում 1%-ով,
- կապիտալ վերանորոգման ժամկետի երկարաձգում 4 տարին դարձնելով 6 տարի, որը կնպաստի էներգաբլոկի շարունակական աշխատանքի ժամանակահատվածի ավելացման,
- կավելանա օգտակար առաքումը 59,5 մլն. կՎտ×ժ-ով, համապատասխանաբար գործող սակագնի պայմաններում 1,207 մլն դրամ և արտահանումը Իրան-Հայաստան պայմանագրի շրջանակներում:

# 5.2 ՀՇԳՑ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ GT13E2 MXL ՏԻՊԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

MXL2 ռեժիմի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագրի արժեքը կազմում է 20,750.0 հազ. եվրո:

Ֆինանսավորումը կատարվելու է Ընկերության սեփական միջոցներով, ի հաշիվ՝

Էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներով նախատեսված նորոգման ծախսերում կուտակված միջոցներ՝ 11.374 հազ. եվրո,

Վերադարձվող պահեստամասերի արժեքից նվազեցումներ՝ 3.340.53 հազ. եվրո,

Ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր՝ 6.035.47 հազ. եվրո:



# 5.3 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագիր

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իրականացնում է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված 8495-AM վարկային համաձայնագրի ներքո «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման ներդրումային ծրագիրը:

### *Ծրագրի նպատակը և հիմնական ուղղությունը*

Ծրագրի նպատակն է բարելավել և հզորացնել ՀՀ էլեկտրահաղորդման ցանցը:

Ծրագրի հիմնական ուղղությունը, որը իրականացվում է Ընկերության կողմից, հանդիսանում է Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցումը, ներառյալ հիմնական սարքավորումների ամբողջական փոխարինում, վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրում, կառավարման սենյակների համար նոր շենքի կառուցում և նշված ենթակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման համար պահանջվող հաղորդման օդային գծերի տեղափոխում և վերամիացում:

### *Ներդրումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորումները և սպասվող արդյունքների գնահատականը*

Ծրագրի շրջանակներում կվերակառուցվի Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ էլեկտրական ենթակայանը, որը կառուցվել է 1962թ.՝ աշխատելով ավելի քան 50 տարի, բարոյապես և ֆիզիկապես մաշված է, ինչպես նաև վթարների քանակը շատ բարձր է: Ենթակայանը միակ կապող օղակն է համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի և էներգահամակարգի միջև, հետևապես ենթակայանի հուսալիությամբ է պայմանավորված էներգաբլոկի անխափան աշխատանքը և արտադրված էլեկտրաէներգիայի անխափան հաղորդումը էներգահամակարգին:

Արդյունքում Ծրագրի իրականացումը նպաստելու է ենթակայանում վթարային դեպքերի նվազեցմանը և էլեկտրահաղորդման ցանցի և համակարգի հուսալիության բարելավմանը:

## Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

ՎԶՄԲ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցներ՝ 30.205.514 ԱՄՆ դոլար, ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող համաֆինանսավորման գումար՝ 7.532.500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում 80:20 հարաբերակցությամբ, որտեղ ծախսերի 80%-ը (ներառյալ հարկերը) կֆինանսավորվի ՎԶՄԲ-ի վարկային միջոցներից, իսկ 20%-ը (ներառյալ հարկերը)՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի շրջանակներում ՀՀ պետբյուջեից նախատեսված համաֆինանսավորման գումարներն Ընկերությանն են տրամադրվում որպես վարկ, որի մարումը նախատեսված է արտաքին աղբյուրներից ներգրավված վարկի մարմանը զուգահեռ:

Վարկի մարման ժամկետը՝ 25 տարի (14,5 տարի արտոնյալ ժամանակահատված):

## Վարկի տոկոսադրույքը՝

Մասհանված գումարի դիմաց փոփոխական սպրեդ տոկոսադրույք (բազային դրույքաչափ + փոփոխական սպրեդ) 2017թ. նոյեմբերի 15-ից կազմում է 2.58% (1.62%+0.96%),

Չմասհանված գումարի դիմաց պարտավճար՝ 0.25% (միայն ՎԶՄԲ-ի վարկային միջոցների համար):

Վարկային միջոցների հասանելիության ժամկետը՝ 2019թ. դեկտեմբերի 31:

***1. Ներդրումների ծավալ, իրականացման ժամանակացույց***

***Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան գնումներ, որոնց համար նախատեսված են հետևյալ գումարները***

| Կատեգորիա<br>ենթակատեգորիա | ՎԶՄԲ վարկային միջոցներից (ներառյալ հարկերը) | | ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում (ներառյալ հարկերը) | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ |
| «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» այդ թվում՝ | 30.205,50 | 14.622.482,55 | 7532,5 | 3.646.483,25 | 37.738,00 | 18.268.965,80 |
| Երևանի ՋԷԿ-ի էլեկտրական ենթակայանի վերակառուցում | 19.258,30 | 9.322.943,03 | 4814,6 | 2.330.747,86 | 24.072,90 | 11.653.690,89 |
| Խորհրդատվական ծառայություններ | 662,50 | 320.716,25 | 165,63 | 80.181,48 | 828,13 | 400.897,73 |
| Միանվագ կառավարման վճար | 75,50 | 36.549,55 | - | - | - | 36.549,55 |
| Այլ | 10.209,20 | 4.942.273,72 | 2552,3 | 1.235.568,43 | 12.761,50 | 6.177.842,15 |

***2017թ. տարեկան բյուջեի կատարողական***




շինմոնտաժային աշխատանքներ և սարքեր սարքավորումների ձեռք բերում

խորհրդատվական ծառայություններ

* Ծրագրով նախատեսված ծախսերը հաշվարկվել են ՀՀ ԿԲ կողմից 31.12.2017թ. սահմանած փոխարժեքով՝ 1ԱՄՆ դոլարը = 484.1 ՀՀ դրամ:

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կատեգորիաների և բաղադրիչների անվանումները | ՎԶՄԲ վարկային միջոցներից (ներառյալ հարկերը) | | ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում (ներառյալ հարկերը) | |
|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ |
| «ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 4.611,6 | 2.223.170,9 | 1.583,0 | 765.222,5 |
| ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 137,4 | 65.997,3 | 15,5 | 7.456,7 |
| ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 61,9 | 29.827,0 | 15,5 | 7.456,7 |
| ՄԻԱՆՎԱԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐ | 75,5 | 36.170,3 | - | - |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 4.474,2 | 2.157.173,6 | 1.567,5 | 757.765,8 |
| ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 2.482,9 | 1.196.890,6 | 631,5 | 305.171,2 |
| ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | 1.991,3 | 960.283,0 | 936,0 | 452.594,6 |

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կատեգորիաների և բաղադրիչների անվանումները | Ընդամենը | | |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | կատարողական % |
| «ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 6.194,6 | 2.988.393,4 | 16% |
| ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 152,9 | 73.454,0 | - |
| ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 77,4 | 37.283,7 | 9% |
| ՄԻԱՆՎԱԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐ | 75,5 | 36.170,3 | 99% |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ | 6.041,7 | 2.914.939,4 | 25% |
| ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 3.114,4 | 1.502.061,8 | - |
| ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | 2.927,3 | 1.412.877,6 | - |

**կատարված վճարումները հաշվարկված են ԱՄՆ դոլարով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով:

1-ին հոդվածով նախատեսված է 220/110/35կՎ ենթակայանի վերակառուցում, ներառյալ հիմնական սարքավորումների ամբողջական փոխարինում, վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում, կառավարման սենյակների համար նոր շենքի կառուցում, ՀՇԳՑ էներգաբլոկի հետ կառավարման և պաշտպանության մալուխների էստակադայի տեղափոխում և վերամիացում, նշված ենթակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման համար պահանջվող հաղորդման օդային գծերի վերամիացում, պաշտպանության և ավտոմատիկայի սարքերի միացում գործող տրանսֆորմատորային սարքերի հետ:

Սույն հոդվածի շրջանակներում 2016թ. հուլիսի 14-ին կնքվել է գլխավոր կապալի պայմանագիր էյ-Բի-Բի էյ-Բի Սաբստեյշընս (Շվեդիա) և Կոբրա Ինստալացիոնես Ի Սերվիսիոս (Իսպանիա) կոնսորցիումի հետ 17,4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարով (առանց տեղական հարկերի և տուրքերի), որը ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 9-ից:

2017թ. ընթացքում իրականացվել են հիմնական և շինարարական մասի նախագծային աշխատանքները, մանրամասն նախագծման աշխատանքների հիմնական մասը ավարտվել և համաձայնեցվել է Գործատուի հետ: Նախագծերի հիմնական մասը անցել է փորձաքննությունը, որից հետո ընդունվել է Գործատուի կողմից, և կատարվել են դրանց դիմաց համապատասխան վճարումներ: Իրականացվել են շինարարական, մասնավորապես՝ հողային, հողանցման կոնտուրի տեղակայման, ֆունդամենտների պատրաստման, դրենաժային համակարգի նախապատրաստման աշխատանքները: ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 17-ի N 996-Ա որոշմամբ գլխավոր կապալառուին տրվել է ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա նախագծման և շինարարական գործունեություն իրականացնելու թույլտվություն:

Կատարված շինարարական և նախագծային աշխատանքների դիմաց վճարումները կազմել են 776,111.1 հազ. դրամ (1,609.0 հազ. ԱՄՆ դոլար):

Իրականացվել են հիմնական սարքավորումների գործարանային փորձարկումները, որոնց ներկա են եղել Պատվիրատուի և Խորհրդատուի ներկայացուցիչները:

Ներմուծվել են ապրանքներ հողանցման կոնտուրի և ֆունդամենտների համար, առաքվել են սարքավորումների և պորտալների մետաղական կոնստրուկցիաները, 200ՄՎԱ և 27,5ՄՎԱ տրանսֆորմատորները և օժանդակ սարքերը:

Մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց վճարումները, ներառյալ ներմուծված ապրանքների մաքսազերծման համար վճարումները կազմել են 327,671.5 հազ. դրամ (679.3 հազ. ԱՄՆ դոլար):

Պայմանագրի ժամկետը կազմում է 17 ամիս՝ սկսած Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

2018թ. նախատեսվում է ավարտել ենթակայանի վերակառուցման աշխատանքները, որից հետո կսկսվի թերությունների վերացման ժամանակահատվածը 2 տարի ժամկետով:

2-րդ հոդվածի շրջանակներում, որպես «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի աշխատակազմին աջակցող խումբ, կնքվել են Պայմանագրեր անհատ խորհրդատուների հետ (ֆինանսական կառավարման գծով, գնումների գծով, բնապահպանական հարցերի գծով), որոնք 2017թ. ընթացքում մատուցել են համապատասխան խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի իրականացման աջակցության և տեխնիկական վերահսկողության համար 2017թ. հունիսի 30-ին կնքվել է խորհրդատվական ծառայությունների պայմանագիր իտալական «Չեզի և Ինչիկո» համատեղ ձեռնարկության («Ամերիա» ՓԲԸ, որպես ենթախորհրդատու) հետ: Պայմանագրի շրջանակներում իրականացվել է նախագծային աշխատանքների դիտարկման աշխատանքներ:

2017թ. ընթացքում անհատ խորհրդատուներին մատուցված ծառայությունների դիմաց վճարվել է 29,841.1 հազ. դրամ (61,9 հազ. ԱՄՆ դոլար):

Ծրագրի իրականացման աջակցության և տեխնիկական վերահսկողության համար «Չեզի և Ինչիկո» համատեղ ձեռնարկության խորհրդատվական ընկերությանը վճարումները կիրականացվեն 2018թ.-ին:

2018թ. նախատեսվում է ավարտել վերը նշված Պայմանագրերով սահմանված ծառայությունների մատուցումը:

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ ՓԲԸ-Ի ԿԱՏԱՐՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

06

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում կազմակեպվել են գլխավոր հատակագծի նախագծի քննարկումներ և Ընկերության, կապալառու և ենթակապալառուների աշխատակիցների հետ հանդիպումներ՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ 220/110/35 ենթակայանի վերակառուցում ծրագրում ՀՀ բնապահպանական օրենսդրությանը և նախատեսվող բնապահպանական և անվտանգության պահանջներին ծանաթացնելու նպատակով:

Կազմակերպվել են ուսուցումներ կապալառու և ենթակապալառուների աշխատակիցների հետ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 220/110/35 ենթակայանի վերակառուցում» ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների ընթացքում բնապահպանական միջոցառումների՝ աղմուկի մեղմացման, օդի աղտոտման, թափոնների կայուն կառավարման, անվտանգության, առաջին օգնության ցուցաբերման և այլ միջոցառումների կազմակերպումն ապահովելու վերաբերյալ: Տրամադրվել են համապատասխան տեղեկատվական նյութեր:

Համաձայն ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջների կազմակերպվել և իրա-կանացվել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ -ի 220/110/35 ենթակայանի վերակառուցում ծրագրի նա-խագծի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ գործընթաց: Հանդիպումների ժամանակ ներկայացվել է վերակառուցման ծրագիրը և ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ծրագիրը բնապահպանական տեսակետից շրջապատի համար վտանգ չի ներկայացնում, բացառությամբ փոշով օդային ավազանի աղտոտումից, որն էլ համապատասխան միջոցա-ռումների կիրառման դեպքում հնարավոր է մեղմացնել: ՇՄԱԳ թույլտվությունը ստացված է:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 220/110/35 ենթակայանի վերակառուցում» ծրագրի բնապահպան փորձագետի կողմից կատարվել և կատարվում են պարբերաբար շրջայցեր դեպի շինհրապարակ, հողային և շինարարական աշխատանքների ընթացքում բնապահպանական և անվտանգության նորմերի վերահսկման և խախտումների վերացման նպատակով:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի 220/110/35 ենթակայանի վերակառուցում» ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի բնապահպան փորձագետի կողմից կազմակերպվել է ստուգայց այցելություն դեպի շինարարական հրապարակ: Համաշխարհային բանկի բնապահպան փորձագետի կողմից հավանության են արժանացել կատարված բնապահպանական միջոցառումներն և ծրագրերը:

Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

# ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ընկերությունը վերջին տարիներին կրել է էական ֆինանսական վնասներ՝ մասնավորապես 2017թ.-ին 7,123,321 հազար դրամ (2016թ.՝ 1,747,856 հազար դրամ), որի արդյունքում հաշվետու ամսաթվի դրությամբ կուտակված վնասը կազմում է 20,002,418 հազար դրամ (2016թ.՝ 13,466,851 հազար դրամ):

***Ընկերության ղեկավարությունը մշակել և հետևողականորեն իրականացնում է ֆինանսական առողջացման միջոցառումների պլան, կատարում է լիկվիդայնության մշտական վերահսկողություն և կառավարում: Ընկերության 2018թ.-ի բիզնես ծրագրի հիմքում ընկած են.***

- 2016թ.-ից IBRD 8615-AM վարկային համաձայնագրով իրականացվող "Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի" շրջանակներում, 2016-2017թ.-ներին մարվել են Ընկերության բարձր տոկոսադրույքներով առևտրային վարկերը, մարվել են գազի մատակարարին նշանակալի պարտքերի գերակշիռ մասը, ինչպես նաև 2018թ-ին կավարտվի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցումը: Նշված 30 միլիոն ցածր տոկոսադրույքով վարկի մարման ժամկետը սահմանված է 25 տարի (14.5 տարի արտոնյալ ժամանակահատվածով):

- Բեռնվածքի կրման ժամանակացույցը, որը 2017թ.-ի դեկտեմբերին հաստատվել է ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից, և համաձայնեցվել էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատորի (ԷՀՕ) հետ:

- ՀԾՀԿ-ի կողմից սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի և հզորության դրույքների սակագները, համաձայն որի 01.02.2018թ.-ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվել է 20.284 դրամ/կՎտժ, նախկին 15.459 դրամ/կՎտժ-ի փոխարեն (31% աճ):

- Էներգաբլոկի, նոր ենթակայանի և շոգեգազային ցիկլով աշխատող գազատուրբինի վերակառուցման արդյունքում նշանակալի կբարելավեն արտադրատեխնիկական ցուցանիշները: Այդ նպատակով Ընկերությունը ներդնելու է 31.12.2017թ.-ին առկա 5,492,000 հազար դրամ բանկային ավանդը, և լրացուցիչ առևտրային վարկեր չի ներգրավի:

- ՀՀ Կառավարության 2017թ.-ի նոյեմբերի որոշումով, Ընկերությունը ներդրումային ծրագրերի շրջանակներում սարքավորումների ներմուծման ժամանակ կօգտվի 2,098,800 հազար դրամ ԱԱՀ-ի և 527,600 հազար դրամ մաքսատուրքի վճարից ազատվելու արտոնություններից:

- Մարդկային ռեսուրսների զարգացման արդյունավետ ռազմավարության կիրառում: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ևս քսան աշխատատեղերի ավելացում միջինը 250 հազ. դրամ միջին աշխատավարձով:

- MXL2-ի արդյունքում 2018թ ընկերությունը կապահովվի հետևյալ տեխնիկատնտեսական արդյունավետությունը՝

- Պայմանական վառելիքի տեսակարար ծախսի նվազեցում.
  MXL ռեժիմում - 258,1գր/կՎտxժ փոխարեն 252,8 գր/կՎտxժ, տնտեսումը՝ 5,3 գր/կՎտxժ,

- Պայմանական վառելիքի տեսակարար ծախսի 5,3 գր/կՎտxժ նվազեցման արդյունքում Ընկերությունը կխնայի 2,148.41 հազ մ3 բնական գազ կամ 209,946.16 հազ. դրամ,
  Հաշվարկ - 5.3 գր/կՎտxժx470.22կՎտxժx-7000կկալ/կգ/8120կկալ/մ3 = 2,148.41 հազ մ3 բնական գազ
  2,148.41 հազ.մ3 գազ x 201.75 $/հազ.մ3 x 484.37 = 209,946.16 հազ.դրամ

- Էներգաբլոկի հզորության 7,0 ՄՎտ ավելացման արդյունքում 2018թ համախառն արտադրանքի օգտակար առաքման աճը կազմելու է 348,104.29 հազ. դրամ
  Հաշվարկ - 7000 կՎտ x 102 օր x 24ժ x 20.284 դրամ/ կՎտxժ= 348,104.29 հազ. դրամ

- Մեկ C ինսպեկցիայի կրճատման արդյունքում էներգաբլոկի տարեկան օգտակար առաքման աճը կկազմի 748,479.6 հազ. դրամ
  Հաշվարկ - (205000կՎտ x 600ր x 24ժ x 20.284դրամ/ կՎտxժ)/ 8տարի = 748,479.6 հազ. դրամ/տարի

Հիմք ընդունելով, որ գործող սակագնի հաշվարկում էլեկտրաէներգիայի առաքման համար նախատեսված «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունից բնական գազի ձեռք բերման ծավալները չեն կրում որևէ նորմատիվային բնույթ, կարող ենք փաստել, որ 2018թ ընթացքում Ընկերությունը տնտեսվելիք 2,148.41 հազ մ3 բնական գազով քիչ ձեռք կբերի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունից, որի արդյունքում կտնտեսի 209,946.16 հազ. դրամ, որը կապահովի ծախսային հոդվածների իրականացումը:

Ընկերության բիզնես ծրագրերի ներդրման արդյունքում, ակնկալվում է ֆինանսական շահութաբերություն 2018թ.-ից սկսած (2018թ.-ի համար՝ 1,739,400 հազար դրամ), և շարունակական լիկվիդայնություն ապահովում:

Ընկերության ղեկավարությունն արդյունավետ կառավարման շնորհիվ ունի հիմնավորված ակնկալիք, որ կշարունակի հավատարիմ մնալ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի համար մրցունակ գնով էլեկտրաէներգիա արտադրելու ռազմավարությանը:

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ 0053, ԱՐԻՆ-ԲԵՐԴԻ 3 ՆՐԲ.3
ՀԵՌ. +374 10 472 760
+374 10 430 340
E-MAIL: MAILBOX@YCCPP.COM
MAILBOX@YTPC.AM
ՀՎՀՀ 02205028
ԲԱՆԿԱՅԻՆ ՈՒԵՎԻՑԻՏԵՐ
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ , Հ/Հ 2473600002170010
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՍԱՍՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դիզայնը՝ ԴՈՄԻՆՈ Փրոդաքշնի